ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24/138 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «25» դեկտեմբերի 2025թ.

Մեծամորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար՝ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Իրավաբանական խորհրդատվական խումբ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ. Հարությունյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հաշվի առնելով, որ անհրաժեշտություն է առաջացել 2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24/138 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակում մատուցվող ծառայության ժամկետը երկարաձգել 30 օրով, ինչպես նաև հիմք ընդունելով Պայմանագրի 1.1, 7.5 կետերը և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8,666,667.00 (ութ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ (Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»:

1.2 Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը հաստատել նոր խմբագրությամբ, համաձայն՝ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

1.3 Պայմանգրի և Պայմանագրի շրջանակում 20 հունվարի 2025թ. կնքված Համաձայնագիր N 1-ի Հավելված 1-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխել և հաստատել համաձայն՝ սույն համաձայնագրի Հավելված 2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և թիվ 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար
------------------------- Է. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Իրավաբանական խորհրդատվական խումբ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, 0039, Եղբայրության Փ./Շ/6/26
info@lcglaw.am
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570098123610100
ՀՎՀՀ 02252599

Տնօրեն՝
------------------------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 1*
*2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքված*
*N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24/138 ծածկագրով պայմանագրի*
*«28» [illegible] 2025թ. կնքված*
*N 3 համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | Մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/հ | Միջանցիկծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | չափման միավորը | ընդհանուր քանակը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | հասցեն | Ժամկետը* |
| 1 | 79111100 | Իրավաբանական խորհրդատվական ծառայություններ | Գնման առարկա է հանդիսանում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ձեռքբերումը: Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մասնագիտական խորհրդատվություն տրամադրել /գրավոր և բանավոր/ վերջինիս բոլոր ընթացակարգերի մասով և կազմակերպել վերջինիս կարիքների համար օրենսդրությամբ սահմանված գործընթացները: Ծառայությունների մատուցման շրջանակը կազմված է լինելու նաև էլեկտրոնային համակարգերի աշխատանքի հետ կապված հարցերից, որի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով Կատարողը պարտավորվում է ծառայության մատուցման ողջ ժամանակահատվածում տրամադրել մեթոդական աջակցություն, մասնագիտական խորհրդատվություն բանավոր կամ Պատվիրատուի մոտ այցելության միջոցով (ըստ անհրաժեշտության) նման կարիքն առաջանալուց հետո առավելագույնը 2 ժամվա ընթացքում:<br>Ծառայության մատուցման ցանկացած փուլում Կատարողը պատասխանատու կլինի տեղական մակարդակով օպերատիվ խորհրդատվության համար (պատասխանել էլեկտրոնային նամակներին և հեռախոսազանգերին, վերլուծել միջադեպերը, միջամտել (հեռահար կապի միջոցով) աշխատակիցների աշխատանքին, ստուգել համապատասխան փաստաթղթերը, կատարել գրառումներ/թարմացումներ խնդիրների բացահայտման գործիքի միջոցով, վերլուծել թերությունները և/կամ դիտանցել միջադեպերի ու տեխնիկական խնդիրների | դրամ | 1 | 8,666,667.00 | ՀՀ, Արմավիրի մարզի Մեծամոր քաղաք | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 29.01.2026թ-ը ներառյալ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | լուծումները և լուծել ենթակառուցվածքի հետ կապված խնդիրները): Ծառայություններ մատուցողին պետք է հասցեագրվեն բոլոր այն խնդիրները, որոնք պահանջում են միջամտություն տվյալ բնագավառում: Կատարողը կգործի Պատվիրատուի նախադրյալների համաձայն 08:00-20:00 ժամերի ընթացքում՝ տրամադրելով հեռահար տեխնիկական աջակցություն Պատվիրատուի անձնակազմի համար: Կատարողը կպատասխանի հարցերին: Պատասխանները կպարունակեն տվյալ խնդրի լուծումը կամ առաջին գնահատումը հնարավոր պատճառների վերաբերյալ (ներառյալ շրջանցող լուծման տրամադրումը մինչև խնդրի վերջնական լուծումը) կամ հետագա պարզաբանումների վերաբերյալ հայցերը: Եթե հնարավոր է առաջարկել միջանկյալ լուծում, այն կիրառվում է որպես հրատապ ժամանակավոր լուծում, մինչև Կատարողի կողմից թերության վերացումը, որպեսզի այն ամբողջապես գործի:<br>Կատարողը պետք է հետևյալ ծառայությունները մատուցի՝<br>• Պատվիրատուի պահանջով՝ կառավարման մարմինների ներքին իրավական ակտերի նախագծերի կազմում, այդ թվում հետևյալ փաստաթղթերի կազմում կամ համապատասխանեցում օրենսդրությանը և/կամ Պատվիրատուի ներկա կարիքներին՝<br>1) գործավարության կարգ.<br>2) փաստաթղթերի պահպանման կարգ.<br>3) գործարքների կնքման կարգ.<br>4) Գույքի ամրացման կարգ.<br>5) շինությունների շահագործման անվտանգության կարգ.<br>6) Տեխնիկական միջոցներից օգտվելու և էլեկտրոնային հաղորդակցության իրականացման կարգ.<br>7) Վարչական տարածքում տեսանկարահանում և տեսաձայնագրում իրականացնելու կարգ.<br>8) Շինություններում հրդեհային անվտանգության կանոններ.<br>9) Համակարգիչներից օգտվող անձանց աշխատանքի կազմակերպման, շահագործման և անվտանգության ապահովման կանոններ.<br>10)Շինությունների էլեկտրակայանքների շահագործման և անվտանգության կանոններ:<br>• Աշխատանքի ընդունելու, փոխադրելու և աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հարաբերություններում խորհրդատվություն.<br>• Աշխատանքային կարգապահության պատասխանատվության հարցերով խորհրդատվություն.<br>• Աշխատանքային վեճերով խորհրդատվություն.<br>• Պայմանագրերի նախագծերի կազմում.<br>• Պայմանագրերի նախագծերի վերաբերյալ կարծիքի կազմում.<br>• Գույքի օտարման, ձեռքբերման, օգտագործման հանձնման փաստաթղթերի նախագծերի կազմում, ընթացքի իրավաբանական ուղեկցում.<br>• Ապրանքային նշանների գրանցման հետ կապված հարցերով խորհրդատվություն և ներկայացուցչություն.<br>• մտավոր սեփականության օբյեկտների հեղինակների հետ (աշխատանքային պայմանագրեր, հեղինակային պայմանագրեր կապալի պայմանագրեր և այլն.) կնքվող պայմանագրերի նախագծերի կազմում.<br>• Դատական գործերով ներկայացուցչության ապահովում՝ այդ թվում՝ հայցադիմումների կազմում, հայցադիմումի պատասխանների կամ առարկությունների կազմում, բողոքների կազմում, միջնորդությունների կազմում.<br>• Դատական գործերի վիճակագրության վարում.<br>• Պատվիրատուի ղեկավարի կողմից բարձրացված իրավաբանական բնույթի հարցերով խորհրդատվություն.<br>• Ստուգումների ժամանակ իրավաբանական խորհրդատվության ապահովում.<br>• Պատվիրատուի պահանջի դեպքում ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրավական աջակցություն/ուղեկցում.<br>• Պատվիրատուի պահանջի դեպքում իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական խորհրդատվցություն.<br>• Պատվիրատուի պահանջի դեպքում Նոր Իրավական ակտերի տեղայնացում.<br>• Պատվիրատուի պահանջի դեպքում Իրավական խնդիրների դեպքում միջանկյալ լուծումների առաջարկում:<br>Ծառայության մատուցումն իրականացվելու է Պատվիրատուի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, Կատարողի կողմից անձամբ:<br>Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած Պատվիրատուի պահանջի դեպքում, կազմակերպվելու են վերապատրաստման դասընթացներ պատասխանատու | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ստորաբաժանման անդամների, որի նպատակն է ապահովել նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական և հետևողական կատարելագործումը: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝

---------------------------- Է. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Իրավաբանական խորհրդատվական խումբ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, 0039, Եղբայրության Փ./Շ/6/26
info@lcglaw.am
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570098123610100
ՀՎՀՀ 02252599

Տնօրեն՝

---------------------------- Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 2*
*2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքված*
*N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24/138 ծածկագրով պայմանագրի*
*«25» դեկտեմբեր 2025թ. կնքված*
*N 3 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | անվանումը | չ/մ | ընդհանուր քանակը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | | 2025 | | | | | | | | | | | | 2026 | Ընդհանուր գինը |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | I-XII | |
| 1 | 79111100 | Իրավաբանական խորհրդատվական ծառայություններ | դրամ | 1 | 666,666.67 | 1,333,333.33 | 2,000,000.00 | 2,666,666.67 | 3,333,333.33 | 4,000,000.00 | 4,666,666.67 | 5,333,333.33 | 6,000,000.00 | 6,666,666.67 | 7,333,333.33 | 8,000,000.00 | 8,666,667.00 | 8,666,667.00 |
| **Ընդհամենը՝** | | | | | | | | | | | | | | | | | | 8,666,667.00 |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Մեծամորի համայնքապետարանի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, Վարչական կենտրոն 4
gnumnermetsamor@mail.ru
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239061
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավար՝
______________ Է. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Իրավաբանական խորհրդատվական խումբ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, 0039, Եղբայրության Փ./Շ/6/26
info@lcglaw.am
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570098123610100
ՀՎՀՀ 02252599

Տնօրեն
______________ Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ